16.qxd 13/08/2026 16:29 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 30 հուլիսի 2026թ. թիվ 16 (644)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ Ն.Գ. ՏԻԿԻՆ ԷՎԱ ՍՈՒՆԴՔՎԻՍԹԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. Տիկին Էվա Սունդքուիսթին:

Ողջունելով դեսպանին՝ Գեղարքունիքի մարզպետն անդրադարձել է հայ-շվեդական համագործակցության շրջանակներում Գեղարքունիքի մարզում վերջին տարիների ընթացքում իրականացված ծրագրերին եւ իր երախտագիտությունը հայտնել Շվեդիայի կառավարությանը՝ ցուցաբերած աջակցության համար:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպան Եվա Սունդքվիստը խոսել է Շվեդիայի կառավարության կողմից մարզում իրականացվող ներդրումների, փոխշահավետ համագործակցության ընդլայնման հնարավորությունների մասին: Զրույցի ընթացքում շոշափվել են նաեւ մարզի տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումներ կատարելու հետ կապված հարցեր:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԶՈԼԱՔԱՐ ՄՏՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

2026 թվականի հուլիսի կեսերից սկսվել եւ ընթանում են Մ-10 Սեւան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական ավտոճանապարհից դեպի Զոլաքար տանող մարզային նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքները:

Ճանապարհաշինական հերթական ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ եւ պետական բյուջեի միջոցներով:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 100 միլիոն 825 հազար դրամ: Ծրագրով նախատեսված է եղած ասֆալտետոնյա ծածկի վրա փոսային նորոգումների իրականացում, հարթեցնող շերտի եւ 5 սանտիմետր հաստության ասֆալտբետոնյա վերին շերտի տեղադրում՝ 2 կիլոմետր երկարությամբ եւ 11 հազար 117 քառակուսի մետր մակերեսով: Նախատեսված է իրականացնել նաեւ ճանապարհի կողնակների լիցքի եւ հարթեցման, կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հուլիսի 7-ից եւ կավարտվեն նույն ամսի վերջերին:

Շինարարական աշխատանքները տեղում դիտարկելու նպատակով Զոլաքար մտնող ճանապարհի շինհրապարակ են այցելել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐԻԱՄ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ՈՍՏԱՆ ՇՈՂԱԳԱՎԱՆՔԸ ԵՎ ԾՐԲԱԿԱՅՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ գյուղը Հայաստանի հնագույն, պատմամշակութային հարուստ ժառանգություն ունեցող բնակավայր է, որը գործել է հազարամյակներ շարունակ, հին քարե դարից մինչեւ նորագույն ժամանակները: Հուշարձանների պահպանության պետական ցանկում Զորագյուղից հաշվառված է Քրիստոսից առաջ 3-2-րդ հազարամյակներով թվագրվող 1 ամրոց, 2 դամբարանադաշտ, 1 քարայր-կացարան, միջնադարյան 3 գյուղատեղի, 3 մատուռ, 6 եկեղեցի, 237 խաչքար-տապանաքար:

Զորագյուղը գտնվում է Սեւանա լճի հարավային ափին, Գեղամա լեռնաշթայի արեւելյան փեշին, ծովի մակերեւույթից 2000 մետր բարձրության վրա:

Հայ մատենագրական աղբյուրներում Զորագյուղը հիշատակվում է Շողագա կամ Շողվագ տարբերակով, որը մեզ է հասել հայ նշանավոր պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու, Ասողիկի եւ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած պատմագրական տեղեկությունների շնորհիվ:

Այս գյուղը շատ առումներով կապված է Գեղամա երկրի փառավոր իշխանուհի Մարիամ Բարեպաշտի անվան ու գործունեության, անգամ՝ վերջին հանգրվանի հետ, ու դրանով էլ շատ ավելի է մեծանում նրա քաղաքական, պատմական, տնտեսական, մշակութային ու հայապահպան կշիռը:

Ըստ պատմագրական տեղեկությունների՝ Շողագայի տնտեսական ու մշակութային վերելքը սկսվում է 9-րդ դարից, երբ Բագրատունյաց արքայատոհմի հիմնադիր Աշոտ Առաջին Բագրատունու դուստր, Սյունյաց տիրուհի Մարիամը արաբ իշխանի լծից փրկագնում է ողջ գյուղը ու այն նվիրում իր հովանավորությամբ կառուցված Շողագավանքին: Վանքի կառուցման ավարտն ու բացումը համընկել է Աշոտ Առաջին Բագրատունու թագադրման արարողության հետ: Արաբական բռնատիրության տապալումից հետո սկսվել է հայկական պետության վերելքը, որտեղ բավականին նշանակալի դեր են խաղացել Մարիամ իշխանուհին, իր ամուսին Վասակը, որդիներ Գրիգոր Սուփանն ու Սահակը:

Շողագավանքի շրջակայքի պատմական գերեզմանոցի մատուռում էլ ամփոփված է փառավոր հայ արքայադստեր ու իշխանուհու աճյունը:

/սկիզբը՝ էջ 4-ում/

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ՀՐԴԵՀՆԵՐԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԽՈՏԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանի մոտ հրավիրված խորհրդակցության ընթացքում քննարկվել են անտառային եւ բուսածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման, հրդեհների դեմ պայքարի միջոցառումների իրականացման, հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, ինչպես նաեւ հրդեհների հետեւանքների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների հետ կապված հարցեր:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ՆԳՆ Պարեկային ծառայության ղեկավարներ, ծառայողներ, էկոպարեկային ծառայության աշխատակիցներ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատասխանատուներ:

Քննարկման արդյունքում որոշվել է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ ձեւավորել մարզային աշխատանքային խումբ՝ վտանգավոր տարածքներում ուսումնասիրություններ կատարելու եւ առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

Կարեւորվել է նաեւ համայնքներում կամավորական խմբերի ձեւավորումը՝ հնարավոր խնդիրների դեպքում աջակցություն ցուցաբերելու համար, եւ իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

Հրդեհների կանխարգելման նպատակով իրականացվելիք աշխատանքներում շեշտվել է նաեւ շահագրգիռ կողմերի փոխգործակցության անհրաժեշտությունը:

16.qxd 13/08/2026 16:29 Page 2

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 27,90 ՀԵԿՏԱՐ ԱՆՏԱՌ ԿՀԻՄՆՎԻ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի տարածքում «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից ու Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ 27,90 հեկտարի վրա անտառ կհիմնվի:

Գավառի համայնքապետարանում տեղի է ունեցել «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից Գավառ քաղաքում անտառտնկման աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջին հանրային լսումը, որին մասնակցել են «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի, Գավառի համայնքապետարանի, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, բնակիչներ:

Հանրային լսման ընթացքում ներկայացվել է ծրագրի ընդհանուր նկարագիրը՝ Գավառում անտառի համար նախատեսված տարածքը, տնկիների տեսակները, աշխատանքների ժամկետները, գործընթացի փուլերը եւ ծրագրի այլ մանրամասներ:

Մասնակիցները ներկայացրել են իրենց կարծիքները եւ առաջարկությունները:

Անտառը հիմնվելու է Գավառ քաղաքի նախկին օդանավակայանին հարող տարածքում, անօգտագործելի, քարքարոտ հողատարածքներում: Տնկվելու է կաղնի, լեռնային թխկի, սոճի, պտղատու ծառատեսակներից՝ վայրի տանձենի եւ խնձորենի: Կիրականացվի եւս մեկ հանրային լսում, որից հետո, արդեն 2026 թվականի աշնաանը կսկսվի ծառատունկը, որը կշարունակվի նաեւ 2027 թվականի գարնանը: Ոռոգման համակարգ կառուցելու ծրագիր չի նախատեսվում, քանի որ ծրագրի կազմակերպիչները տնկիների աճն ու զարգացումը որոշել են հարմարեցնել բնական պայմաններին այնպես, ինչպես որ բնական անտառների աճի դեպքում է: Տարածքը բարեգործական կազմակերպությունը օգտագործելու է 25 տարի ժամկետով, իսկ անտառի ստեղծումից, բնականոն աճի ու զարգացման ապահովումից հետո այն հանձնելու է համայնքի կառավարմանը

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱԼԱՇԿԵՐՏԻ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Ալաշկերտի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, հիմնանորոգումն ընդգրկում է ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատման, սալիկապատ մայթերի կառուցման եւ ջրահեռացման համակարգի տեղադրման աշխատանքներ:

Ալաշկերտի փողոցի մայթերի սալարկման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 44 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է երկողմանի սալիկապատ մայթերի կառուցում՝ 810 քառակուսի մետր մակերեսով:

Ալաշկերտի փողոցի ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 40 միլիոն 611 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատում՝ 410 գծամետր երկարությամբ եւ 2870 քառակուսի մետր մակերեսով: Տեղադրվում է նաեւ ջրահեռացման համակարգ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հուլիսի 13-ից եւ իրականացվել շուրջ 25 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Մարտունու Ալաշկերտի փողոցն իր պատմության մեջ հիմնանորոգվում է առաջին անգամ:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ՍԵՎԱՆ- ՇՈՂԱԿԱԹ-ՎԱՐԴԵՆԻՍ ՄԱՅՐՈՒՂՈՒՑ ԾԱՓԱԹԱՂ ԳՅՈՒՂ ՄՏՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ ու պետական բյուջեից տրամադրված միջոցների հաշվին արդեն ավարտական փուլում են գտնվում /Հ-7/ -Ծափաթաղ մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 103 միլիոն 200 հազար դրամ: Ծրագրով նախատեսված է գոյություն ունեցող ասֆալտբետոնյա ծածկի եւ կողնակների հանույթ, ճանապարհի նոր հիմքի եւ եզրաքարերի ու երկշերտ ասֆալբետոնյա ծածկի տեղադրում, միակողմանի մայթի կառուցում, գծանշում եւ կահավորում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հունիսից եւ հուլիսի 17-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտակա փուլում:

Սեւան-Շողակաթ-Վարդենիս մայրուղուց Ծափաթաղ մտնող ճանապարհը հիմնանորոգվել է 800 գծամետր երկարությամբ եւ 4927 քառակուսի մետր մակերեսով, կառուցվել է միակողմանի սալիկապատ մայթ:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԿՍՎԵԼ Է ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Հուլիսի սկզբներից Գեղարքունիքի մարզում սկսվել եւ ընթանում են անասնակերի բերքահավաքի աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, անասնակերի բերքահավաքն առայժմ ընթանում է ցածրադիր գոտիների բնական խոտհարքերում կամ բազմամյա կերային մշակաբույսերի արտերում: Նախնական տվյալներով՝ 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմում է 30-40 ցենտներ: Տեխնիկական միջոցները եւ աշխատուժը բավարար են՝ բերքահավաքի աշխատանքներն իրականացնելու եւ ավարտելու համար:

2026 թվականի հուլիսի 15-ի տվյալներով՝ մարզում արդեն կուտակվել է 750 տոննա անասնակեր: Շուտով խոտի բերքահավաքը կտեղափոխվի բարձրադիր գոտիներ:

«Առատ տեղումների ու եղանակային բարենպաստ պայմանների շնորհիվ փարթամ բուսականություն է աճել արտերում ու խոտհարքերում, արոտներում, նույնիսկ այնչափ, որ տնտեսությունները հնարավորություններ կունենան 1 տարվա պահանջվածից ավելի անասնակեր կուտակել,-ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից:

Անասնակերի կուտակման աշխատանքները Գեղարքունիքի մարզում կշարունակվեն մինչեւ սեպտեմբեր ամսի կեսերը:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս օրերին սկսվել եւ ընթանում են Ելենովկա, Բարեկամություն, Աշոտ Երկաթ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, 660 գծամետր տարածք ընդգրկող փողոցներում այժմ ընթանում են ենթածրագրերով նախատեսված շինարարական աշխատանքների տարբեր փուլերը:

Ելենովկա փողոցի հիմնանորոգման համար հատկացվել է 53572700 դրամ, Բարեկամություն փողոցի հիմնանորոգման համար՝ 66592620 դրամ, Աշոտ Երկաթ փողոցի հիմնանորոգման համար՝ 111312680 ՀՀ դրամ՝ կառավարություն-համայնք 50-ական տոկոս համաֆինանսավորմամբ:

Շինաշխատանքների կապալառու կազմակերպությունը «Ճան Շին» ՍՊԸ-ն է:

Արդյունքում՝ եւս երեք փողոց կդառնա ներկայանալի, համարավետ ու անվտանգ՝ լրացնելով ճանապարհաշինական ենթածրագրերի շարքը:

Ճանապարհաշինական այս ծրագրի շրջանակներում արդեն իսկ ասֆալտապատվել են Սեւան քաղաքի Խաղաղության, Բաբաջանյան եւ Կոմիտաս փողոցները:

Այս փողոցներում, որոնք գտնվում են քաղաքի կենտրոնական եւ բանուկ հատվածներից առավել հեռու, տասնամյակներ շարունակ չեն իրականացվել ասֆալտապատման աշխատանքներ:

2025 թվականին հաստատված ճանապարհաշինական սուբվենցիոն ծրագրով հերթը հասավ նաեւ «հեռավոր» փողոցներին, որոնք օրեցօր ստանում են բարեկարգ եւ ներկայանալի տեսք:

Արմինե Ղուկասյան

16.qxd 13/08/2026 16:29 Page 3

ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ՋԵՌՔԵՐ Է ՈՒԶՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լանջաղբուր գյուղի Սուրբ Խաչ եկեղեցին գտնվում է բնակավայրի կենտրոնական մասում: Բազիլիկ այս եկեղեցին աչքի է ընկնում արեւմտյան ու հարավային շքեղ մուտքերով, արեւմտյան մուտքի հարավային ու հյուսիսային կողմերի որմերում տեղադրված քանդակազարդ ու վիմագիր երկու խաչքարերով , բարավորի վերեւում պատկերված Հիսուս Քրիստոսի քանդակով, պատերի ամենավերին շարվածքի երկայնքով մեկ տարածվող քիվերով եւ կամարածածկ ու կամարակապ խորանով: Այն ունի շուրջ 13 մետր լայնություն ու 25 մետր երկարություն՝325 քառակուսի մետր մակերեսով:

Եկեղեցու հիմնադրման ժամանակաշրջանը համարվում է 1877 թվականը, ինչպես եւ գրված է հարավային ու արեւմտյան մուտքերի բարավորներների վերեւում: Սակայն այդ թվականը շատ ավելի աղերս կարող է ունենալ եկեղեցու վերակառուցման կամ վերանորոգման, քան թե հիմքից կառուցման ու հիմնադրման հետ: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն իր «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» աշխատության մեջ վկայում է, որ 1860-70-ական թվականներին Լանջաղբյուր գյուղն ունեցել է ընդամենը 67 տուն՝ մի քանի հարյուրի հասնող բնակչությամբ, որոնց համար նման չափի եկեղեցի կառուցելը կարող էր թանկ շռայլություն լինել: Իսկ ավելի շատ հավանական է, որ Սուր Խաչ եկեղեցին բարձրացել է ավելի հին, միջնադարյան եկեղեցու ավերակների վրա, որտեղ աչքի է զարնում հատկապես արեւելյան մասում գտնվող կամարածածկ խորանը եւ որմերի փորվածքներում տեղադրված վաղ միջնադարյան դարաշրջանում կերտված խաչերի քանդակները:

Եկեղեցու ողջ սրահը եղել է փայտածածկ՝ հենված բավականին հաստ գերանների վրա, որոնք պահպանված են մինչ այժմ: Այնքանով, որքանով որ սրահի փայտյա ծածկն ու խորանի քարակապ ծածկը ժամանակագրորեն ու ճարտարապետական հորինվածքով չեն համապատասխանում միմյանց, արդեն խոսում են այս կառույցի նորոգման, ոչ թե հիմքից կառուցելու օգտին: Եկեղեցու արեւմտյան մուտքի որմերի մեջ ագուցված վիմագիր ու քանդակազարդ երկու խաչքարերը կերտվել են 16-րդ դարում: Վիմագրությունը վերծանել է Սեդրակ Բարխուդարյանը՝ իր հեղինակած «Դիվան հայ վիմագրության» գրքում: «ԿԱՄԱԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՏԱՆՈՒՏԵՐ ՍԱՐԳԻՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԻՆՁ. ՅՈՎԱՆԷՍ ԿԱԶՄՈՂ: ԹՎ ՋՂԱ/1542/»,-գրված է մուտքի հարավային կողմի որմում տեղադրված խաչքարի քիվին, թեւերի արանքում եւ ստորին մասում:

«ԿԱՄԱԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՁԻՁ ԱՂԵՍ ԿԱՆԿՆՈՑԻ ՁԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ ՍԱՐԳԻՍ ԱՂԻՆ Ի ԹՎԱԿԱՆՍ ՀԱՅՈՑ :Ռ: /1551/ԿԱԶՄՈՂՍ ՈՎԱՆԷՍ»,-գրված է արեւմտյան մուտքի հյուսիսային կողմի որմի մեջ տեղադրված խաչքարի քիվին, շրջանակներին եւ գնդի շուրջը:

Սեդրակ Բարխուդարյանի վկայությամբ, ինչպես իրեն բանավոր կերպով փոխանցել են Լանջաղբյուրի բնակիչները նախորդ դարի կեսերին, այդ խաչքարերը բերվել ու եկեղեցու պատերի մեջ ագուցվել են «Կուռու Խարապա» կոչվող գյուղատեղիի ավերակներից, որը գտնվում է Սեւան-Մարտունի ավտոմայրուղու հարեւանությամբ, իսկ Լանջաղբյուրից՝ շուրջ 10 կիլոմետր հեռավորությամբ: Իսկ որոշ տեղացիներ այժմ նույնիսկ կարծիք են հայտնում առ այն, ինչպես լսել են իրենց մեծերից, որ այդ երկու խաչքարերը 1830 թվականին գաղթական քարավանների հետ սայլերի վրա բերվել են Հին Բայազետի Ջանգեզոր գյուղից:

Ամեն դեպքում, այս մեկ փաստն էլ բավական է ենթադրելու, որ Սուրբ Խաչ եկեղեցու սրբատաշ քարերը, իրենց քանդակներով, կամ վերցվել են հին եկեղեցու ավերակներից, կամ մոտակա այլ ավերված հոգեւոր կառույցներից: Անգամ կասկածելի է թվում արեւմտյան մուտքի բարավորի վերեւում տեղադրված Հիսուս Քրիստոսի պատկերաքանդակի ժամանակագրությունը, քանի որ քանդակի վերեւում Տիրոջ անունը գրված է ուռուցիկ տառերով՝ ՅՍ. ՔՍ. կրճատ տարբերակով, իսկ ահա ներքեւում արդեն փորագիր, վերեւի ոճից տարբեր տառատեսակով գրված է՝ «ԿԱԶՄՈՂ ԷԼՔԱՆԴՈՒԼ»: Բարավորի վրա եւս կա արձանագրություն, որը չկարողացանք ընթերցել որոշ մասերում տառերի մաշված լինելու պատճառով:

Եկեղեցու սրահի փայտյա ծածկն ամբողջությամբ փլված է, պատերը որոշ կողմերում արդեն ճաք են տվել, ու շինությունը լիովին կանգնած է փլուզման վտանգի առջեւ:

Փոխարենը դեռեւս կանգուն է արեւելյան կողմում վեր բարձրացող խորանը, որի քարածածկ ու քարաշար կամարը դեռ դիմանում է ժամանակների կործանանար ձեռքերի ու լքվածության փորձություններին՝ չնայած արդեն նկատվող լայն ճաքերին:

Սուրբ խաչ եկեղեցու խորանի պատին ագուցված է 9-10-րդ դարի խաչքար, իսկ Մկրտարանի արեւելյան պատին՝ 16-րդ դարերով թվագրվող, արձանագիր խաչքարը, որը պատկանում է Յաղմուրին: Հարավային պատի տակ տեղադրված է 10-11-րդ դարերի խաչքար, որի տակ էլ հանգչում է 19-րդ դարի երկրորդ կեսին Սուրբ խաչ եկեղեցում սպասավորության եկած Տեր Սահակը: Վերոնշյալ խաչքարերը հաշվառված են հուշարձանների պահպանության պետական ցանկում:

Սուրբ Խաչ եկեղեցին 1877 թվականից ի վեր գործել է մինչեւ 1930-ական թվականները, որից հետո այն վերածվել է կոլխոզի հացահատիկի ու այլ մթերքների պահեստի: Իսկ ԽՍՀՄ վերջին տարիներին այն լքվել է հիմնովին, մատնվել անտերության ու փլվել՝ մինչ օրս այդպես էլ մնալով առանց ծածկի եւ թաղվելով հողակույտերի, մարդահասակից ավել բարձրացող եղինջների, այլ տեսակի թփերի բույլերի մեջ: Եկեղեցու երկու մուտքերի դռները կիսաբաց ու կիսախարխուլ վիճակում են, որտեղից ուխտավորները հաճախ են թափանցում ներս՝ խորանի որմերում տեղադրված խաչքարերի վրա մոմեր վառելու, իրենց հոգու պարտքը կատարելու:

Եկեղեցին վերականգնելու փորձ Լանջաղբյուրի համայնքապետարանը տարիներ առաջ ձեռնարկել է, սակայն այդ ձեռնարկը մնացել է կես ճանապարհին, քանի որ վերականգնման հովանավորություն ստանձնած գործարարը առողջական ու այլ խնդիրների պատճառով չի կորողացել արդեն



կազմված նախագիծը կյանքի կոչել: Ի դեպ, որքան էլ զարմանալի է, նախագծի կազմմանը չի նախորդել հնագիտական որեւէ ուսումնասիրություն կամ պեղումներ, որով էլ կհստակեցվեր մեզ հուզող հարցը. արդյո՞ք այստեղ մինչ 1877 թվականը չի եղել հոգեւոր ու պատմաճարտարապետական նշանակության այլ կառույց, արդյո՞ք հողի տակ թաքնված չէ պատմաշակութային այլ շերտ: Ու չենք բացառում, որ պեղումների դեպքում ի հայտ կգան հնագիտական նոր իրողություններ:

Լանջաղբյուրի Սուրբ Խաչ եկեղեցու սպասավորների մասին հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց նույն գյուղի բնակիչ Մանուկ Հովհաննիսյանը, ով սերում է այն քահանայական ընտանիքից, որի ներկայացուցիչները 1877-1937 թվականներին սպասավորել են այստեղ.

-Երբ մեր գյուղի բնակիչները 1830 թվականին Հին Բայազետի Ջանգիզոր գյուղից գաղթել ու հաստատվել են այստեղ, հոգեւոր սպասավոր չեն ունեցել, իսկ եղած հոգեւոր կառույցներն էլ եղել են ավերված վիճակում: Գյուղի մեծերը դրսից հոգեւոր սպասավոր են հրավիրել, ով եկել է ներկայիս Գեղամավան գյուղից՝ Տեր Սահակ անունով: Սուրբ Խաչ եկեղեցու հարավայի կողմի պատի տակ վաղ միջնադարյան մի գեղաքանդակ խաչքար կա տեղադրված: Տեր Սահակը հանգչում է դրա ներքո: Նա իմ պապի պապն է, որով շատ եմ հպարտ, քանի որ շատ ջանքեր է գործադրել ինչպես Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման, այնպես էլ նրա գործունեության ապահովման ուղղությամբ: Այս եկեղեցում առաջին մկրտությունը կատարել է Տեր Սահակի որդի Տեր Հովհաննեսը: Մկրտվել են մեր գյուղացիներ Մանուկն ու Մովսեսը:

Տեր Հովհաննեսից հետո եկեղեցում պաշտոնավարել է Տեր Խաչատուրը, որը եղել է ժամանակի ամենաուսյալ ու գրագետ մարդկանցից մեկը՝ կրթություն ստանալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Տեր Խաչատուրի եղբոր անունն Աբրահամ է, ում տանը մինչ այժմ պահվում է սուրբ գիրք համարվող «Նարեկը»: Գյուղի վերջին քահանան եղել է Խաչատուրը: Ես սերում եմ Աբրահամից: Մեր տոհմից աքսորել են Տեր խաչատուրի թոռ Վանուշին»,- պատմեց Մանուկ Հովհաննիսյանը:

Տեր Սահակի թոռ Տեր խաչատուրի մասին գրավոր հիշատակություն է թողել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը. «Գյուղն ուներ 67 տուն, եկեղեցի հանուն Սուրբ Խաչի: Այս գյուղից էր իմ գրագիր եւ քարտուղար դպիր Խաչատուրն Տեր Հովհանյան, որ ուսումն ավարտել էր Տփղիսու Ներսիսյան դպրանոցումն, որը եւ հետո ձեռնադրվեցավ քահանա»,-գրում է Սմբատյանցը իր հեղինակած «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» գրքում:

Սուրբ Խաչ եկեղեցուց քիչ հեռու գտնվում են երկու այլ սրբավայրեր՝ Թուխ Մանուկ մատուռը եւ Սուրբ Հակոբ եկեղեցին, որոնք գործել են տարբեր դարաշրջաններում, որոնց շուրջ էլ տարածվել են գերեզմանոցներ: Եթե Թուխ Մանուկ մատուռը նորոգվել է Լանջաղբյուրի բնակիչ Միշա Փուրթյանի ու նրա որդի Գագիկ Հակոբյանի ձեռամբ, ապա Սուրբ Հակոբ եկեղեցին մնում է գրեթե կործանված վիճակում, որից հազիվ պատերի մի մասն է երեւում: Դժվար չէ կռահել, որ այս հավատի տները գործել են դարեր շարունակ, սակայն ավերվել են օտար նվաճողների ասպատակությունների ու հայ բնակչության հանդեպ պարտադրած բռնագաղթերի կամ ջարդերի արդյունքում:

Իսկ դրանց պահպանության գոտին առավել փոքրացել է Լանջաղբյուրի տարածմանը զուգահեռ, շատ հուշարձաններ մնացել են տնամերձերում կամ թաղվել հողի տակ: Ու հենց այստեղ է բարձրանում ցավագին հարցն առ այն, թե ինչու՞ է մեր կողմից նման անհոգի վերաբերմունք դրսեւորվում մեր իսկ պատմության, մեր հոգեւոր կառույցների ու պատմամշակութային արժեքների հանդեպ:

Անկախ նրանից, թե երբ է հիմնադրվել Սուրբ խաչ եկեղեցին, 1877 թվականից առաջ, թե այդ նույն թվականին, այն ծառայել է հայ հանրությանը, նրա ազգային ուխտին ու հավատին, հայկականության պահպանմանն ու տարածմանը: Այո, մենք էլ հպարտորեն արձանագրում ենք, որ վերջին երկու դարերի ընթացքում, շնորհիվ 1830 թվականի պատմական գաղթի, Լանջաղբյուր գյուղն այսօր դարձել է Հայաստանի Հանրապետության ամենաշեն, ծաղկուն ու գեղեցիկ բնակավայրերից մեկը՝ ավելի քան 500 տնտեսությամբ ու 2411 բնակչությամբ, նույնիսկ բավականին ներկայանալի Սփյուռքով, իր կրթական, ստեղծարար ներուժով: Սակայն այդ հպարտությունը չքվում է առաջին իսկ հայացքից, երբ սեփական աչքերով տեսնում ես Սուրբ Խաչ եկեղեցու մերօրյա ավերակները, նրա հետագա փլուզման վտանգը, իսկ ամենակարեւորը՝ հանրության անբավարար, անհոգի վերաբերմունքը: Ու ժամանակն է նաեւ, որ այս հիմնախնդրին արձագանքեն առաջին հերթին աշխարհիկ ու հոգեւոր իշխանությունները՝ հուշարձանի հետագա պահպանությունն ու վերականգնումն ապահովելու նպատակով:

Այլապես Լանջաղբյուրի Սուրբ Խաչ եկեղեցու ավեր ու լքված վիճակը մեզանից եւ ոչ մեկին պատիվ չի բերում:

Խոսրով Խլղաթյան

ԵՐԱՆՈՍՈՒՄ ԲԱՐԵՐԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՆՈՐՈԳՎԵԼ ՈՒ ՀԱՐԹԵՑՎԵԼ Է 12 ԿԻԼՈՄԵՏՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐԱՀ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում բարերար Հրաչյա Խանսանամյանի անձնական միջոցներով նորոգվել ու հարթեցվել է 12 կիլոմետր երկարության ճանապարհ, որը նպաստելու է թե՛ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, թե՛ զբոսաշրջային այցերի կազմակերպմանը Սուրբ Հովհաննես մատուռ ու գյուղի այլ հուշարձաններ եւ տեսարժան վայրեր:

Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանի տեղեկացմամբ, նման մեծածածավալ աշխատանքների իրականացման նպատակով բարերարը վարձակալել է 10 միավոր տեխնիկա, որոնց գործադրմամբ շուրջ մեկուկես ամիս ընթացել են դաշտամիջյան ճանապարհների նորոգման, հարթեցման ու լայնացման աշխատանքները:

-Նորոգված ճանապարհներից 1-ը, մոտ 2 կիլոմետր երկարությամբ, տանում է դեպի Սուրբ Հովհաննես մատուռ ու Արցախյան պատերազմներում զոհված հայորդիների հիշատակին նվիրված Խաչ-հուշարձան: Այս սրբավայրը ե՛ւ շատ հայտնի

ուխտատեղի է, ե՛ւ զբոսաշրջային վայր, ուր այցելուների հոսք է նկատվում գրեթե տարվա բոլոր եղանակներին: Այսուհետ սրբավայր բերող ճանապարհն արդեն անցանելի է բոլոր տեսակի մարդատար ավտոմեքենաների համար:

Նորոգված ճանապարհներից երկրորդը, մոտ 10 կիլոմետր երկարությամբ, տանում է դեպի Երանոսի հանդամաս, ուր գտնվում են գյուղի արոտավայրերն ու խոտհարքերը: Այս առումով սա անգնահատելի օգնություն է անասնապահությամբ զբաղված մարդկանց, որոնք արդեն կօգտվեն միանգամայն նորոգված ու անցանելի ճանապարհներից: Հավելեմ, որ դաշտամիջյան այդ ճանապարհները գտնվում էին խիստ անբարեկարգ, գրեթե անանցանելի վիճակում: Հրաչյա Խանսանամյանը տարբեր տարիների ընթացքում եւս գյուղում իրականացրել է բարեգործական տարբեր ձեռնարկներ, որոնք թեթեւացրել են մարդկանց հոգսերը,- ներկայացրեց Սաշա Բավեյանը:

Խոսրով Խլղաթյան

16.qxd 13/08/2026 16:29 Page 4

ՄԱՐԻԱՄ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ՈՍՏԱՆ ՇՈՂԱԳԱՎԱՆՔԸ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Շողագավանքը համարվում է հայկական միջնադարյան պատմաճարտարապետական հրաշալիքներից մեկը՝ իր ինքնատիպությամբ, ճարտարապետական լուծումներով, քանդակների շքեղությամբ, այլ առանձնահատկություններով: Թեպետ այն մեզ հասել է կիսակործան վիճակում՝ առանց ծակի ու գմբեթի, հարավային ամբողջական պատի, սակայն նման տեսքի մեջ անգամ այն արտացոլում է անկրկնելի վեհություն ու շքեղություն, քանդակագործական ու ճարտարապետական արվեստի բացառիկ նմուշ, որով միայն ու միայն կարելի է հպարտանալ մեզանից ավելի քան 1150 տարի առաջ ապրած հայ ճարտարապատներով, քանդակագործներով ու քարագործ վարպետներով, նրանց մտքի փայլատակումներով ու հրաշագործ ձեռքերով:

Շողագավանքը կառուցվել է մոխրագույն տուֆի կանոնավոր մշակված սրբատաշ քարերից: Ըստ հատակագծային հորինվածքի այն եռաբսիդ, չորս անկյուններում միահարկ ավանդատներով եկեղեցի է : Ճակատները մշակված են եղել հատվածքում կիսաշրջանաձեւ զույգ խորշով, որը եզակի երեւույթ է համարվում հայկական ճարտարապետության մեջ : Շողագավանքի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային պատին պահպանվել են շինարարական արձանագրության առանձին բեկորներ:

Պատմաճարտարապետական այս հրաշալիքը կանգուն ու գործող է մնացել մինչեւ 1679 թվականը՝ կործանվելով Գառնիի աշխարհավեր երկրաշարժից, որի մասին դառնակսկիծ հիշատակություն է թողել հայ պատմիչ Զաքարիա Քանաքեռցին: Նա այդ արհավիրքի ժամին գտնվել է Հովհաննավանքում ու միայն հրաշքով է կարողացել փրկվել:

Նշենք, որ Գառնիի 1679 թվականի հունիսի 4-ի կործանարար երկրաշարժը, 9-10 բալ ուժգնությամբ, ավերել է Երեւանի Նորքի, Քանաքեռի, Նորագավիթի, Նորագյուղի, Չորագյուղի եւ այլ շատ բնակավայրերի աշխարհիկ ու հոգեւոր շինությունները: Ամբողջովին ավերվել է Գառնի գյուղը, որտեղ զոհվել է 7600 մարդ, իսկ Քանաքեռում զոհվել է 1228 մարդ:

«Ցերեկվա ժամը մեկին երկինքն այնպես գոռաց, ինչպես ամպերն են որոտում: Գոռալուց հետո ահագին դղրդյունով շարժվեց Արարատյան երկիրը: Այս երկրաշարժը եղավ Գառնիի կողմից, եւ փուլ եկան բոլոր շինությունները, գեղեցկահարկ բնակարանները, վանքերն ու եկեղեցիները: Ահա ավերված եկեղեցիները. Աղջոց վանքը, Այրիվանքը, Հավուց թառը, Տրդատակերտը, Խոր Վիրապը, Ձագավանքը եւ այլն... Բազմաթիվ գյուղեր քանդվեցին, Քանաքեռ գյուղում հավի մի բույն անգամ չմնաց... Մեռելներն ավելի շատ էին, քան կենդանի մնացածները...»,- գրում է Զաքարիա Քանաքեռցի պատմիչը:

Դժվար չէ կռահել, որ երկրաշարժի էպիկենտրոն հանդիսացող Գառնի գյուղից, որը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի մյուս փեշին, հարվածի ալիքը հասել է նաեւ Շողվագ գյուղ ու հիմնովին կործանել Շողագավանքը՝ այն ճեղքելով-բաժանելով երկու կեսի: Կառույցի հյուսիսակողմը մնացել է բլրի վրա կանգնած, իսկ ահա հարավային կողմը բլրի հետ միասին սահել, փլվել ու թափվել է ցած: Թեեւ չկա հիշատակություն վանքի միաբանությունում ու գյուղում մարդկային զոհերի ու աղետների մասին, սակայն անառարկելի է, որ նման ուժգնության բնական արհավիրքը չէր կարող ավարտվել առանց ողբերգությունների: Բայց պակաս ողբերգական չի եղել եւ այն, որ Շողագավանքն այլեւս անհնար է եղել վերականգնել նման վիթխարի ավերածության պատճառով: Ավելին, կործանված սրբատաշ ու քանդակազարդ քարերը հետագայում օգտագործվել են Ձորագյուղի Մասրուց Անապատ ու Սուրբ Աստվածածին եկեղեցիների վերանորոգման նպատակներով՝ արդեն բացառելով այս վեհաշուք կառույցի վերականգնման որեւէ փորձ:

Խորհրդային տարիներին անվանի գրող, երգահան, ազգագրագետ, հայագետ, երջանկահիշատակ Հայրիկ Ղազարյանը, համագործակցելով Հուշարձանների պահպանության պետական կոմիտեի եւ անվանի հայագետ, վիմագրագետ Սուրեն Սաղումյանի հետ, շատ ջանքեր գործադրեց Շողագավանքի պահպանված պատի հիմքերի ամրակայման ուղղությամբ: Հարավային, արեւմտյան ու արեւելյան կողմերից տեղակայվեցին հսկայական չափերի քարեր, որի շնորհիվ էլ կանխվել է հետագա սողանքի ու պահպանված պատի փլուզման վտանգը:

Բնական նման արհավիրքին նախորդել կամ հաջորդել են քաղաքական արհավիրքները, որոնք Շողվագ բնակավայրը հասցրել են լիակատար ամայացման ու հայազրկման: Այդ մասին կարդում ենք 17-րդ դարի հայ մատենագիր Առաքել Դավրիժեցու պատմության մեջ, որտեղ նա դառնակսկիծ հառաչանքով ներկայացնում է հայ ժողովրդի կրած չարչարանքները պարսից Շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթի, ինչպես նաեւ՝ Ջալալիների ձեռնարկած արշավանքների ժամանակ: «Արդ՝ այս բոլոր գավառները եւ նրանք, որ սրանց հետ էին, շահը հրամայեց՝ քշեցին տարան Պարսկաստան, եւ հայոց վայելչատես աշխարհը ավերակ ու անմարդաբնակ դարձրեց... Նաեւ տեսնում եմ քաղցրաշունչ, առողջարար ու կենսապարգեւ օդը ու սրա հողմը: Եվ սրա այլ ամեն վայելչությունները տեսնելով, հեղձամուղձ լինելով փղձկում եմ եւ արտասվելով ողբում ու կսկծում եմ, որովհետեւ անապատ եղավ մեր վայելուչ ու քաղցր երկիրը: Եվ մեր հայրենի ու բնիկ ժառանգություններից, օրհնված երկրից, որ լիքն էր աստծու սրբերի մասունքներով, ոռոգված էր սուրբ մարտիրոսների արյունով եւ օրհնված էր սուրբ առաքյալների քարոզներով, եղան վտարանդի ու տարագրված օտար երկիր, այլացեղ եւ այլալեզու ազգերի մոտ, որոնք հոգու եւ հավատի թշնամիներ են ու մարմնի արյան ծարավի: Նրանք այնտեղ օրավուր քիչ քիչ նվազում են, ոմանք մահվամբ ու կորուստով, ոմանք հավատի ուրացությամբ դառնում են պիղծ անապատի անօրեն կրոնին: Իսկ երկնանման ու դրախտակերպ եկեղեցիներին ի՞նչ ասեմ, որոնք մնացել են խավարում, բնակիչներից թափուր են դարձել, մերկացել են զարդերից, եղել են համբարուների ու ջայլամների հանգրվաններ, ըստ մարգարե Եսայու՝ դարձել են աղվեսների, նապաստակների որջեր, խաշների ու խոշոր անասունների մակաղատեղի, թռչունների ու ավերաբնակ բվերի բներ: Փոխանակ օրավուր նորոգման, օր առ օր խարխլվում, քայքայվում, ավերվում ու փլուզվում են: Փոխանակ անուշահոտ խունկերի բուրման լցվում են ողբերով, լռել են փառաբանիչների ձայները, տարեկան տոների ասմունքները եւ փրկական պատարագների նվիրաբերումները»,- նկարագրում է Առաքել Դավրիժեցին:

Պակաս աղետաբեր չեն եղել նաեւ Օսմանյան Թուրքիայում ձեւավորված ապստամբ Ջելալիների արշավանքները Հայաստանի վրա, որոնց արդյունքում ամայացել է նաեւ Գեղարքունիք գավառը: «Ապա ջալալիները մտածեցին գնալ Գեղամա գավառը, որ Գեղարքունիքն է, քանզի գիտեին, որ այնտեղ են ցորենի ու գարու ամբարները եւ ոչխարների հոտեր ու խոշոր անասունների նախիրներ, այսինքն՝ պախրեներ, շատ կան: Այս պատճառով ջալալիներից շատերը ելան գնացին Գեղամա գավառը եւ բազմաթիվ գյուղեր կողոպտելով ավարեցին... Բազմաքանակ անասուններ՝ հոտով ոչխարներ, նախիրներ, երամակով ձիեր քշած բերում էին: Երբ երկու օրվա ճանապարհ եկան, քանի որ այս գործողությունները կատարվում էին ձմռանը, իսկ այդ ձմեռը ծանր էր ու ձյունաշատ, այդ պատճառով բոլոր անասունները հոգնած մնացին ճանապարհին եւ ձյան շատությունից ու թանձրությունից չէին կարողանում գնալ: Այս պատճառով մնացած գրաստների բեռները շալակ-շալակ բաժանեցին եւ դրին գերիների՝ տղամարդկանց, կանանց, տղաների շալակները: Եվ այսպես սարը անցկացնելով հասցրին Կարբի գյուղը: Բայց թե ժողովուրդը որքան դաժան աղետի ու փորձության ենթարկվեց այս գործից, ոմանց ձեռքերը, ոտքերը, քթերը ցրտահարվեցին, ոմանք մարմնի մասերով հոդախախտ եղան, իսկ ուրիշները սառնացուրտ, դառնաշունչ օդը շնչելուց սառեցին, այնտեղ իսկ ճանապարհին մնացին, մեռան: Իսկ այլ ուրիշներ ցորեն շալակած կանանց մասին ասում էին՝ ծանր բեռից հոգնած, ցրտից ուժասպառված, կյանքից վհատված չէին կարողանում գնալ. շալակով նստում էին ձյան վրա, այդպես մնում ու մեռնում էին: Եվ այսպես, ովքեր ճանապարհին մեռան, մեռան, իսկ ովքեր մնացին, բոլորին բերին հասցրին Կարբի: Ոմանց փողով վաճառեցին, ոմանց պահեցին գործերի ծառայության համար: Իսկ ջալալիները այսպես մնացին մինչեւ գարուն՝ հասան մոտ համբարձման օրերին: Ապա այնտեղից ելան գնացին Ախալցխայի գավառը, այնտեղ էլ այդ գործն էին կատարում»,- հայ ժողովրդ հանդեպ եղերական այդ գործողությունների մասին տեղեկանում ենք Առաքել Դավրիժեցու մատյանից:

Բնական է, որ այս բոլոր սարսափների միջով անցել է նաեւ Շողվագը՝ սպասելով Տիրոջ գալստյան երանավետ պահին, սակայն հայտնվելով դժոխային, մարդակեր ցեղերի հոշոտող ճիրանների մեջ:

Երվանդ Լալայանը հիշատակում է, որ 1606 թվականին, ըստ մատենագիտական տեղեկությունների, այս վանքի առաջնորդն է եղել Դավիթ Եպիսկոպոսը, որ ոտանավոր գրվածքով ողբացել է Շահ Աբասի հրամանով կատարված գերեվարությունը եւ այդ ժամանակ տեղի ունեցած սոսկալի սովը: Նաեւ այս վանքի առաջնորդը 1670 թվականին եղել է Մկրտիչ եպիսկոպոսը, որի արտագրած ավետարանը 1910-ական թվականներին պահպանված է եղել Սեւանի վանքում:

«Եկեղեցու արեւմտյան կողմում կա մի փոքրիկ մատուռ, որ, ամենայն հավանականությամբ, լինելու է Մարիամ տիկնոջ դամբարանը: Սա շինված է սեւ եւ կարմիր սրբատաշ քարերով, 8,5 մետր երկարությամբ, 5 մետր լայնությամբ ու 4,5 մետր բարձրությամբ: Արեւելյան կողմում ունի մի կիսաբոլոր կոզակ, սեղանով ու առանց խորաններ: Այժմ մնում են միայն հյուսիսային եւ արեւմտյան պատերը, մասամբ էլ արեւելյան պատի կոզակը: Հյուսիսային պատի մեջ, ներքուստ, կան երեք որմնասյուն, որոնց վրա բոլորում են երկու կիսաբոլոր, պատին կից կամարներ: Այս հյուսիսային պատի մեջ բացվում է մի դուռ, որի կամարակալ քարի վրա եղել է արձանագրություն, սակայն ջնջված է, այնպես որ գրերի տեղը հինգ սանտիմետրաչափ փոս է ընկած, կողքերին նկատելի են տառերի հետքեր,- վկայում է Երվանդ Լալայանը:

Իր «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ նույն կարծքին է հաստատում հայագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը, դարձյալ ենթադրելով, թե Շողագավանքի պահպանված պատի արեւմտյան կողմում պահպանված կիսավեր շինությունը կարող է լինել Մարիամ իշխանուհու դամբարան-մատուռը:

Սակայն այդ կիսավեր մատուռը, որը Շողագավանքի մոտիկ է, բայց նրան կից կառույց չի համարվում ու կարող է կառուցված լինել ավելի վաղ կամ ուշ ժամանակներում, ամենեւին էլ իր ներսում չի ամփոփում Մարիամ իշխանուհու աճյունը: Շատերի կարծիքով էլ Մարիամ իշխանուհու մարմինն ամփոփված է Շողագավանքից մի քանի տասնյակ մետր հեռավորությամբ գտնվող փոքրիկ մատուռի մեջ, որտեղ մի քանի խաչքարեր կան պահպանված, որոնցից մեկի վրա պահպանված է արձանագրություն՝ թվագրված 984 թվականով: Վիմագրությունը վերծանել է Սեդրակ Բարխուդարյանը. «ՆԼԳ/984/ ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ... ԵՎ Ի ՀԱՅՐԱԵՏՈՒԹԵԱՆ...ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՆՁԻՆ ԻՄՈՅ ԵՒ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆԻՍԻ...»: Բարխուդարյանի մեկնաբանությամբ՝ հիմնվելով վիմագրության մեջ պահպանված թվագրության վրա, չկարդացվող մասերը վերականգնվում է այսպես՝ թագավորի անունը՝ Սմբատ Տիեզերակալ եւ կաթողիկոսի անունը՝ Խաչիկ Արշարունի:

Ի վերջո, որտե՞ղ է իրականում հանգչում Մարիամ իշխանուհին: Այս ուղղությամբ շատ երկար ուսումնասիրություն է կատարել երջանկահիշատակ Հայրիկ Ղազարյանը ու եկել այն հետեւության, որ Հայոց մեծ տիկնոջ դամբարանը գտնվում է Շողագավանքից շուրջ 150 մետր հեռու, պատմական գերեզմանոցի կիսավեր մատուռի մեջ: Այդ մասին հաստատում է նաեւ Հայրիկ Ղազարյանի որդին՝ Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի ատենապետ Սարո Ղազարյանը:

-Այդ մատուռի մեջ 1960-ական թվականներին մեր գյուղից մի հանգուցյալի են թաղել: Հայրս փորձել է կանխել, նման բան թույլ չտալ, սակայն չի կարողացել ցանկալի արդյունքի հասնել: Իսկ ինչի՞ց ելնելով էր հայրս կարծում, որ դա Մարիամ իշխանուհու դամբարանն է. նա հենվում էր Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ հիշատակված փաստի վրա, որի համաձայն Մարիամ իշխանուհին թաղված է Շողագավանքից մոտ 150 մետր դեպի արեւմուտք: Բնական է, որ մատուռը բարձրացել է հենց դամբարանի վրա: Երբ փորել են այդ հանգուցյալի գերեզմանափոսը, անձամբ տեսել են այն սարկոֆագը՝ քարե դագաղը, որի մեջ հենց գտնվում է Մարիամ իշխանուհու մարմինը: Նույնիսկ նրանցից մեկն արդեն բոլորել է իննսուն տարին ու կարող է վկայել այդ մասին: Հետո այնպես պատահեց, որ մահացավ մատուռում թաղված այդ մարդու կինը, ու նրան արդեն պետք է ամփոփեին իր ամուսնու կողքին: Երբ բացում էին գերեզմանը, արդեն ելնելով հետաքրքրությունից, ինքս անձամբ եմ գտնվել այդտեղ, տեսել ու լուսանկարել այդ դամբարանը, որը գտնվում է մատուռի մեջ, 1,5 մետր խորության վրա,- վկայեց Սարո Ղազարյանը:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

16.qxd 13/08/2026 16:29 Page 5

ՄԱՐԻԱՄ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ՈՍՏԱՆ ՇՈՂԱԳԱՎԱՆՔԸ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Շողագավանքի պատմական գերեզմանոցում պետական պահպանության ներքո հաշվառված է 128 խաչքարտապանաքար, որոնցից 120-ը կերտվել են 9-13-րդ դարերում, մնացածը՝ 14-17-րդ դարերում: 9-11-րդ դարերում կերտվել է գեղաքանդակ 89 խաչքարտապանաքար, ու նման շռայլ կոթողների առկայությունը հիմնականում պայմանավորված է Շողվագ բնակավայրի տիրապետող դիրքով, Շողագավանքի հոգեւոր բարձր նշանակությամբ, որտեղ դարերի ընթացքում անգամ փայլատակել ու երբեք չի խամրել Մարիամ իշխանուհու փառքը:

Շողագավանքի եւ նրա տարածքի պատմական գերեզմանոցի վիմագիր արձանագրությունների վերծանությունն ամփոփված է Սեդրակ Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ:

Շողագավանքի պահպանված հյուսիսային պատի վրա պահպանվել է միատող արձանագրություն, որը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, պատկանում է Մարիամ իշխանուհուն: Ըստ Բարխուդարյանի՝ շինարարական արձանագրությունը սկսվել է հարավային պատից, շարունակվել արեւելյան պատին ու ավարտվել հյուսիսային կողմում: «Ի թագաւորութեան... կանգնեցի զեկեղեցիս յանուն գլխաւոր առաքելոյն Պողոսի...Վասն հիշատակի ծնողաց իմոց...գնեցի զգիւղն»: Արձանագրության որոշ բեկորներ ժամանակին օգտագործվել են Մասրուց անապատ եկեղեցու շինարարության մեջ:

Մնացած վիմագրությունները գտնվում են խաչքար-տապանաքարերի վրա: «ՈՉԳ/1234/ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՍԵԻԱԴԻ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆԻՍԻ, ԵՍ ՍՈՒՏԱՆՈՒՆ ԵՐԵՑ ՅՈՎԱՍԱԲՍ ՈՐԴԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ ԽՈՒՐՏԻՐԱ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՅԱՂՈԹՍ ՅԻՇԵՑԷՔ»:

Գերեզմանատան արեւմտյան մասի մի խաչքար էլ կրում է այս վիմագրությունը. «Ի ԹՎ ՉԴ/ 1255/ ԵՍ ՈՍԿԵԻԱՆ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ԻՆՁ ՈՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ՈՒ ԵՂԲԱՅՐ ԻՄՈ ՇԱՐՈՅ. ՅԱՂՈԹՍ ՅԻՇԵՑԷՔ»:

Վիմագրերում ընթերցվել են նաեւ Ըռզատի, Ղարաճի, Ոսկան Սարկավագի, Բարաթ աղայի, Փանոս աղայի, Բէրամի, Գուլանի, Վարդանիսի, Պարոն Լանէի, Շահմասուր աղայի, Աղաբի, Ջանի, Ավանիսի, Շաղունի, Նանափաշի, Աղազարի անունները:

Հետաքրքիր է 1601 թվականով թվագրվող օրորոցաձեւ տապանաքարի արձանագրության բովանդակությունը. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԿՐՏՉԻՆ :ՌՇ: ԹՎԱԿԱՆԻ :Ա: ԱՒՐՆ ՄԵՌՕ. ՔՐԻՍՏՈՍ ՅԻՇԵՑԷՔ. ՁԵՌԱՍԲ ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ՀՈՐԵՂԲՈՐ ՍՈՑԱ»: Խաչքարերից մեկի վրա էլ արձանագրված է Պախշայիշ կազմողի անունը:

Շողագավանքի պատմական գերեզմանոցը, Շողագավանքի կիսավեր պատի հետ միասին, բաց երկնքի տակ մի անկրկնելի թանգարան է հիշեցնում, որտեղ ներդաշնակորեն մեկտեղված են հայկական գրերն ու քանդակների խորհրդավոր գծերը, կենցաղային պատկերներն ու Աստվածաշնչյան մոտիվները, գեղարվեստական մտահղացումները:

Գերեզմանային լռության մեջ, սակայն, այցելուների հետ խոսում են անցած դարերը, քարագործ ու քանդակագործ վարպետների թողած հիասքանչ կոթողները, կենսասեր, աստվածավախ, ազգասեր իշխանների ու հոգեւորականների անունները, Աստծո արաքայության ճանապարհը երազող ու կերպավորող ստեղծագործ ձգտումները:

Մեզ առավել զարմացրեց ու տպավորեց միջնադարյան գեղաքանդակ խաչքարերի տիրույթում պահպանված հեթանոսական ֆալլոսի քանդակը, որին տեղի բնակիչները կոչում են «Պորտաքար»: Ջորագյուղի բնակիչ, 63 տարեկան Հակոբ Հակոբյանի ներկայացմամբ՝ այդ Պորտաքարին ուխտի են եկել տարածքում կամ այլ վայրերում բնակվող չբեր կանայք, որպեսզի կարողանան մայրանալ:



-Այս Պորտաքարն այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը: Ես մեծերից եմ լսել, որ չբեր կանայք շատ են այցելել այստեղ ու նստել Պորտաքարի վրա, որն իրենից ներկայացնում է տղամարդու սեռանդամի քանդակ: Նրանք հիմնականում եկել են գիշերով կամ այն պահերին, երբ տարածքում մարդկանց չեն նկատել: Չի էլ բացառվում, որ ավանդույթի ուժով այսօր էլ գտնվեն այստեղ այցելող չբեր կանայք, որոնց տանջում է մայրանալու հոգսը: Շողագավանքի գերեզմանոցում առկա են գեղաքանդակ, շքեղ տեսքով հարյուրից ավելի խաչքար-տապանաքարեր, որոնք կերտվել են 9-17-րդ դարերի ընթացքում, սակայն նրանց մեջ իր բացառիկ տեղն ունի նաեւ այս հուշարձանը, որը բնական է, կերտվել է շատ ավելի հեռավոր ժամանակներում՝ հայ հեթանոսական դարաշրջանում՝ հրաշքով պահպանվելով քրիստոնեական հուշարձանների կողքին,- ներկայացրեց Հակոբ Հակոբյանը:

Ջորագյուղի Շողագավանքի գերեզմանոցում գտնվող Պորտաքար-ֆալլոսի քանդակն ունի ավելի քան 1 մետր երկարություն ու 40 սանտիմետր լայնություն: Այն կերտված է տեղական բազալտ քարից ու գտնվում է գետնատարած դիրքում: Չի բացառվում, որ այն ավելի վաղ ժամանակներում եղել է կանգնեցված վիճակում:

Ջորագյուղի Պորտաքար-ֆալլոսի մասին որեւէ հիշատակություն չկա ինչպես պատմական աղբյուրներում, այնպես էլ Ջորագյուղում ուսումնասիրություններ կատարած հնագետների աշխատություններում: Պետական պահպանության հուշարձանների ցանկում էլ այն հաշվառված չէ:

Ֆալլոսի պաշտամունքը Հին Հայաստանում տարածված է եղել անհիշելի ժամանակներից: Ֆալլոսը՝ բնության բեղմնավորումն ու վերածնությունը խորհրդանշող քարը, բնորոշ է եղել Հայաստանի պաշտամունքային սրբավայրերին, որոնք առկա են եղել Լճաշենում, Մեծամորում, Օշականում, այլ տեղերում:

Ֆալլոսի գոյությունը Շողագավանքի տարածքի գերեզմանոցում արդեն իսկ փաստում է, որ պաշտամունքային այս վայրը գործել է դեռեւս հեթանոսության ժամանակներում, քաղաքակրթական տարբեր միջավայրերում, իսկ Շողագավանքը պարզապես 9-րդ դարում կառուցվել կամ վերակառուցվել է մեկ այլ հոգեւոր շինության հիմքերի վրա: Մեզ բավականաչափ տպավորեց նաեւ Յոթ քույրերի խաչքարերի սրբավայրը, որը գտնվում է Շողագավանքի գերեզմանոցի հարավային կողմում, Հակոբ Հակոբյանի տնամերձ հողամասում, Շողվագ գետի ափից քիչ հյուսիս, մարդակային աչքից մի տեսակ քողարկված վայրում:

Հողե թմբի տակ, մի ծառի շվաքում ու բարձրացած կանաչների մեջ թաքնված էին գեղաքանդակ յոթ խաչքարերը, որոնք իրենց կերտվածքով նման են ինների դարի խաչքարերին:

Խաչքարերի դիմաց բխում է պաղպաջուն աղբյուրը, որն առավել սրբացնում է թե՛ տեղանքը, թե՛ դարերի հեռվից մեզ հասած պատմամշակութային հրաշալիքները:

Խաչքարերին կպած մոմերի մնացորդները հուշում են, որ այս սրբավայրը շատ այցելուների է ձգում իրեն:

Հակոբ Հակոբյանի պատմելով՝ ինչպես լսել է իր մեծերից, այստեղ ամփոփված են յոթ քույրերի մարմինները, ու ամեն խաչքար կանգնեցված է նրանցից յուրաքանչյուրի պատվին: Ամենայն հավանականությամբ, նրանք հանուն հավատի սրբացած նահատակներ են:

-Այս աղբյուրին Գըռի աղբյուր են կոչում, քանի որ սրա ջուրը բուժիչ է բորոտ, մաշկային հիվանդություններ ունեցող մարդկանց համար, որոնց մեր բարբառով «Գըռոտ» են կոչում,- ասաց Հակոբ Հակոբյանը:

Գողտրիկ այս անկյունը տարածվում է կանաչազարդ մի ձորի մեջ, որով հոսում է Շողվագ գետը, որի հարավային, արեւմտյան ու արեւելյան բարձունքները ներկայանում են շռայլ ու բացառիկ բնապատկերներով:

Բնական է, որ «Յոթ քույրերի» խաչքարերն էլ Շողագավանքի ու նրա տարածքի գերեզմանոցի պատմության անբաժան մասն են կազմում, այնպիսի հարուստ պատմության, որի շատ գաղտնիքներ դեռ թաղված են մնում հողի տակ կամ անհայտության մշուշներում, բայց սպասում են իրենց բացահայտման ու խոսելու հերթին:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի բնակավայրերում ավարտին են մոտենում ասֆալտապատ ճանապարհների փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքները:

Կատարված աշխատանքների արդյունքում, որոնք իրականացվել են 2026 թվականի հունիսից, Գավառ քաղաքում, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Նորատուս, Գանձակ, Հայրավանք, Բերդֆկունք, Լճափ եւ Ծովազարդ գյուղերի ասֆալտապատ ճանապարհների փոսային նորոգումներն ու ճաքալցումներն ընդգրկել են շուրջ 3500 քմ մակերես:

Այդ նպատակով Գավառ համայնքի 2026 թվականի բյուջեից նախատեսված է հատկացնել 20 միլիոն դրամ:

Աշխատանքներն իրականացրել է «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ԿՈՒՏԱԿԱՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 4 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կուտական գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 4 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 102 միլիոն 130 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 3-ը սուբվենցիոն են՝ 85 միլիոն 368 հազար դրամ արժեքով, եւ մեկը՝ պետական՝ 16 միլիոն 762 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Կուտականում կառուցվել է 9500 մետր խմելու, 450 մետր ոռոգման ջրատարների ներքին ու արտաքին ցանցեր, 1200 մետր լուսավարության ցանց:

Պետական «Ռոյալթի» ծրագրով կառուցվել է Կուտականի ոռոգման ջրատարը:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԱԿՈՒՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են գերեզմանանոց տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Ակունքի գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 50 միլիոն 575 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրի նախագծով նախատեսվում է իրականացնել՝ հողային պաստառների վերականգնում, ջրահեռացման համակարգի վերականգնում՝ ջրթող կառուցվածքների նորոգում, նոր խողովակների տեղադրում և ջրթող վաքերի կառուցում, ճանապարհի ամբողջական ասֆալտապատում, ճանապարհի կահավորում և գծանշում՝ 643 գծամետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հուլիսի երկրորդ կեսից և կավարտվեն առաջիկա շաբաթների ընթացքում:

Այս ծրագրի իրականացումը կնպաստի Ակունք բնակավայրի ճանապարհային ենթակառուցվածքների բարելավմանը, երթևեկության անվտանգության բարձրացմանը և բնակիչների համար առավել հարմարավետ ու անվտանգ տեղաշարժի ապահովմանը:

«Գեղամա աշխարհ»

16.qxd 13/08/2026 16:29 Page 6

ԿԱՅԱՑԱՎ «ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Երեւանի «էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի դահլիճում կայացավ ՀՀ վաստակավոր շինարար, պետական մրցանակի դափնեկիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պետական ու հասարակական գործիչ Վազգեն Պողոսյանին նվիրված գրքի շնորհանդեսը:

Գիրքը հեղինակել է տեխնիկական գիտությունների թեկնածու, քաղաքագետ, գրող Առուշան Հակոբյանը:

Շնորհանդեսին մասնակցում էին Վազգեն Պողոսյանի հետ կյանքի ընդհանուր ճանապարհ անցած գրողներ, մտավորականներ, պետական, քաղաքական, զինվորական ու հասարակական գործիչներ, գործընկերներ, դասընկերներ, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, պաշտոնական այլ անձինք:

Բացման խոսքով հանդես եկավ գրքի հեղինակը.

-Գիրք-էսսեն նվիրված է հմուտ եւ փորձառու ինժեներ-շինարար, բարեգործ Վազգեն Պողոսյանի անցած ուղուն եւ արդյունավետ գործունեությանը: Նա իր մարդասեր մոտեցումներով, հայրենանվիրությամբ, աշխատանքի նկատմամբ պահանջկոտությամբ ու պատասխանատվության բարձր զգացումով արժանացել է իր հետ առնչվող մարդկանց սիրուն ու հարգանքին: Իր գործունեության ընթացքում Վազգեն Պողոսյանը հասել է բազմաթիվ հաջողությունների: Բազմիցս է ձեռք մեկնել կարիքավոր ու անապահով մարդկանց: Նա եղել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի երկու գումարումների պատգամավոր, երկար տարիներ ղեկավարել «Երեւանշին» ընկերությունը, իրականացրել համազգային ու հանրային կարեւորագույն նշանակության բազմաթիվ կառույցներ:



Վազգեն Պողոսյանը ղեկավարել եւ իրականացրել է ճարտարապետական եւ ծավալատարածական լուծումներով թերեւս եզակի նախագիծ ունեցող Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու կառուցումը, Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի, Հայֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի, Հանրապետության հրապարակի, վերակառուցման եւ նորոգման, Սպիտակի երկրաշարժի հետեւանքների վերացման, զինվորական եւ պաշտպանական օբյեկտների, մի շարք այլ կառույցների շինարարական աշխատանքները: Նա մշտապես արժեւորել ու կարեւորել է շինարարությունը ու համոզված է, որ յուրաքանչյուր դրաշրջանի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը տվյալ ժամանակաշրջանի արտացոլանքն են: Վազգեն Պողոսյանի բարեգործական կարեւոր ձեռնարկներից մեկը իր ծննդավայր Գեղհովիտի Թուխ Մանուկ մատուռի վերակառուցումն էր, որը եւս, մյուս կառույցների պես, ապրելու է դարերի ու սերունդների հիշողության մեջ: Նրա հեղինակած գրքերի մեջ առանձնանում է «Գեղհովիտ» հանրագիտարանային նշանակության գիրքը, ուր ներկայացված են հայրենի գյուղի պատմամշակութային ու բնության հուշարձանները, տոհմերը, նշանավոր մարդիկ, պատմական իրադարձությունները: Նա շատ է ճամփորդել Արեւմտյան Հայաստանում՝ իր պապերի երկրում, անձամբ այցելել իր պապերի ծննդավայր հանդիսացող Ալաշկերտի Քոփկռան գյուղ, գտել իր պապի ջրաղացը, նույնիսկ բարձրացել է Արարատի գագաթ: Բազում են այն շնորհներն ու արժանիքները, որ իր մեջ կրում է Վազգեն Պողոսյան մարդն ու քաղաքացին,-նշեց Առուշան Հակոբյանը:

Այնուհետ իրենց ելույթներում Վազգեն Պողոսյանի գործունեության, բարեգործական տարբեր ձեռնարկների, այլ արժանիքիների մասին խոսեցին գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսյանը, Համահայկական գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու Աբգար Ափինյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մերուժան Գալստյանը, ԶՈՒ եւ ոստիկանության պահեստի գնդապետ Անդրանիկ Հակոբյանը, լրագրող Հակոբ Մարտունին, այլ բանախոսներ:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ գրքի հերոսը՝ Վազգեն Պողոսյանը.

-Ձեր գրառումների, մտորումների ու խոսքերի մեջ ես ոչ միայն ինձ եմ տեսնում, այլ նաեւ ձեր ապրած ժամանակը, մարդկանց, որոնք իմաստ ու բովանդակություն են հաղորդել մեր անցած ճանապարհին, այն զարդարել ապրող ու մնայուն գործերով : Որքան էլ փորձենք անձնավորել մեր գիրն ու գնահատականը, այն մեզ շրջապատող աշխարհի մեջ է, մարդկանց մեջ է, որոնց հետ ու որոնց կողքին ձեւավորվել է մեզնից յուրաքանչյուրն առանձին-առանձին: Երախտապարտ եմ ձեր ելույթներում հնչեցրած գնահատականների ու հիշողությունների համար: Համոզված եմ, որ այս գիրքը կապրի՝ իր հետ ապրեցնելով նաեւ ինձ համար արժեքավոր շատ ու շատ անուններ,- նշեց Վազգեն Պողոսյանը:

Խոսրով Խլղաթյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԿԱՌՈՒՑԵԼ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ՝

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Լուսակունք գյուղում «EU4Sevan+» ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել բնահեն լուծումների կիրառմամբ կեղտաջրերի մաքրման կայան:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանն ընդունել է Եվրոպական Միության պատվիրակության ներկայացուցիչներին՝ Համագործակցության բաժնի ղեկավար Ֆրենկ Հեսսին, «EU4Sevan+» ծրագրի ղեկավար Նիլս Թեւսին, խորհրդատուներ Մարտին Յեգերին, Կարապետ Օհանյանին եւ Վարազդատ Սարգսյանին:

Այցի նպատակն էր՝ ներկայացնել եւ քննարկել Վարդենիս համայնքում բնահեն լուծումների կիրառմամբ կեղտաջրերի ապակենտրոնացված մաքրման համար ընտրված տարածքները, ինչպես նաեւ՝ շահառու կողմերի հետ համակարգել ծրագրի իրականացման հաջորդ քայլերը:

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ողջունել է պատվիրակության անդամներին, շնորհակալություն հայտնել այցելության եւ արդյունավետ համագործակցության համար՝ ընդգծելով, որ նման նախաձեռնությունները կարեւոր նշանակություն ունեն համայնքի կայուն զարգացման, շրջակա միջավայրի պահպանության եւ Սեւանա լճի էկոհամակարգի պահպանման գործում: Հանդիպումն անցել է գործընկերային եւ կառուցողական մթնոլորտում:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԲԵՐՔԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼՈՒ Է ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ

Մարտունու համայնքապետարանի գործընկերությամբ «Armenia Tree Project» բարեգործական կազմակերպությունը Ջուդիթ Սարյանի, Վիկտոր Զարուգյանի ու նրանց ընտանիքի մեծահոգի աջակցությամբ, ինչպես նաեւ «Democracy Today» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզի տարածքում կառուցել է երկու ջերմոց՝ յուրաքանչյուրը՝ 117 քառակուսի մետր մակերեսով: Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, թեեւ ջերմոցների պաշտոնական բացումը տեղի է ունեցել դեռեւս 2025 թվականի վերջին, սակայն այժմ կատարվում է առաջին բերքահավաքը, որին մասնակցել են նաեւ մանկապարտեզների սաները:

-Նախագծի նպատակն է՝ ոչ միայն թարմ բանջարեղենով ապահովել երեխաներին, այլեւ հենց կրթության հիմքերից սերմանել գիտակցություն, թե ինչպես է ստեղծվում սնունդը: Իսկ այսօր տեղի ունեցավ այս տարվա անդրանիկ բերքահավաքը: Վարունգի առաջին բերքը հավաքելու այս տոնական իրադարձությանը մասնակցեցին բարեգործական կազմակերպության, Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի եւ համայնքի մանկապարտեզների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ հենց իրենք՝ մանկապարտեզների փոքրիկ սաները: Երեխաներն իրենց հետ բերել էին հիացմունք եւ անսահման ոգեւորություն: Էկոլոգիապես մաքուր բերքը նախատեսված է համայնքի մանկապարտեզների համար, որպեսզի երեխաները ստանան թարմ, օգտակար եւ վիտամիններով հարուստ սնունդ,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ԴԴՄԱՇԵՆՈՒՄ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎՈՒՄ Է 4 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դդմաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են 4 փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Դդմաշենի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 98 միլիոն 400 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ճանապարհների երթեւեկելի մասի ասֆալտապատում՝ 7700 քմ. մակերեսով, մայթերի սալիկապատում, եզրաքարերի եւ վաքերի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Արմինե Ղուկասյան

ՏՐԵՏՈՒՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տրետուք գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 100 միլիոն 700 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 70 միլիոն 940 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 2-ը՝ պետական՝ 29 միլիոն 760 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 6068 մետր խմելու, 1000 մետր ոռոգման ջրատարների ներքին ու արտաքին ցանցեր, հիմնանորոգվել 232 գծամետր ճանապարհ, բնակավայրի կարիքների համար ձեռք բերվել կիսաբեռնատար ամենագնաց ավտոմեքենա:

Տրետուքի ճանապարհի ասֆալտապատումն ու ավտոմեքենայի ձեռքբերումն իրականացվել են պետական ծրագրով, «Ռոյալ թի» ծրագրի շրջանակներում:

ՆՈՐԱԿԵՐՏՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 6 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 483 միլիոն 700 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 138 միլիոն 700 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 1-ը՝ պետական, 345 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Նորակերտում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է 15000 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, վերանորոգվել մանկապարտեզի շենքի տանիքը, պետական ծրագրով հիմնանորոգվել Շողակաթ-Վարդենիս մայրուղուց Նորակերտ մտնող 2100 գծամետր մարզային նշանակության ճանապարհը:

16.qxd 13/08/2026 16:29 Page 7

ՄԱՐԻԵՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՈՂԱՐՁԱԿՈՂ ՔՆԱՐԸ

Մարիետա Սարգսյանը ծնվել է 1964 թվականին, ՀԽՍՀ Մարտունու շրջանի Վարդաձոր գյուղում: Սովորել ու ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը եւ Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Գրել սկսել է դեռեւս դպրոցական տարիներից: Առաջին անգամ տպագրվել է 5-րդ դասարանում՝ «Պիոներ կանչ» թերթում, իսկ 6-րդ դասարանում մի փոքրիկ պատմվածքով հանդես է եկել .Գրքերի աշխարհ» թերթում: Այնուհետ շարունակաբար տպագրվել է Մարտունու շրջանի «Թռիչք» թերթի գրական բաժնում: Ունի 15 համահեղինակային գրքեր, որոնք տպագրվել են ինչպես Կալիֆորնիայի գրողների միության ալմանախում , այնպես էլ՝ տարբեր ալմանախներում: Հրատարակել է 1 հեղինակային գիրք՝ «Պատրանք եւ մարմին» վերնագրով:

Մարիետա Սարգսյանը տարիներ շարունակ ու համառորեն ստեղծում է ուրույն, անկրկնելի, սիրով ու հույզերով, քնարականությամբ ու քնքշությամբ լի, շողշողուն գրականություն, որն ընթերցողին ձգում է առաջին իսկ տողերից ու տանում դեպի սիրո տիեզերական տարածություններ, անկեղծության, վեհ երազների, մաքառումների, ճշմարտության որոնումների հանգրվաններ:

Նրա բառարվեստի խորքերից ճառագում է սիրո, հավատարմության, նվիրումի, կենսասիրության շողքը, կշռադատված խոհականությունը, արարչագործ կամքը, Բարության ու Ճշմարտության հանդեպ անխորտակ հավատը: Գեղեցիկի ու Վեհի անվերջ փնտրուքների մեջ Մարիետա Սարգսյանի քնարական հերոսը միշտ կառչած է իր սուրբ երազանքներին ու ձգտումներին, կյանքի վառ գարուններին ու ձմռան խստաշունչ փոթորիկներին, վայելքներին ու կորստյան անհուն ցավին:

Չափածո, թե արձակ, միեւնույն է, նրա գիրը գրավում է ամեն մի տարածություն, որը կարիք ունի գեղարվեստական բազմաբովանդակ, զուլալ ու զտված ասելիքի:

Խոսրով Խլղաթյան

Տու՜ր ինձ քո սիրո հուրը մշտավառ,
ես քոնն եմ հավերժ, գերին արբունքիդ...

ՄԻ ՊԱՀԻՐ ՍԵՐԴ

Մի պահիր սերդ, շաղ տուր հոգուս մեջ,
Թող սիրո փայլը հոգուս ընդերքում դառնա ոսկեփայլ սիրո ծաղկուն էջ...
Մի պահիր սերդ, շաղ տուր սրտիս մեջ,
Ձարդարիր սիրտս քո սիրո լույսի ցոլքերով անշեջ...
(Ինչպես Երկինքն է կուրծքն իր զարդարում աստղե մանյակով,
Եվ գիշերային խավարը ցրում աստղերի փայլով)...
Մի պահիր սերդ, թող հոսի անկանգ,
Ինչպես որ գարնան առվակն է հոսում,
հոսում անալիք , հոսում է հանդարտ,
Ու կարծես ծաղկի, թփի հետ խոսում...
Նա ծարավ հողին պաղ ջուր է տալիս,
Ու էլ ծարավից ծաղկունք չեն լալիս...
Մի պահիր սերդ, շաղ տուր հոգուս մեջ,
Որ իմ երգերը չմնան կիսատ, գրվեն մինչեւ վերջ:

ՆԿԱՐԵՑԻ ԵՍ ՄԻ ԵՐԿԻՆՔ

Նկարեցի ես մի երկինք,
Եվ ամպը այն կիսաթխպոտ
Քո մազերի գույնը ուներ...
Եվ արեւը ջերմ ժպտացող
Քո տա՛ք սրտի շունչը ուներ...
Նկարեցի գիշեր թախծոտ՝
Պաղ լուսինը քո աչքերի փայլը ուներ...
Եվ ցոլանքը արծաթափայլ՝
Սիրուդ ձգող լույսը ուներ...
Ես հասկացա, որ մասն ես դու իմ աշխարհի,
Իմ երկնքի՛, իմ արեւի՛ եւ իմ լուսնի՛,
Որ խռովքդ՝ փոթորի՛կն է իմ աշխարհի,
Խենթ հայացքդ շանթն է՝ հուրը իմ երկնքի...
Քո ժպիտը ծիածան է՝ կամար կապած,
Բազուկներդ, շողն արեւի՝ ինձ փաթաթված,
Դու՜ ես աշխարհն՝ իմ աշխարհում այս լռակյաց,
Գիրկդ կգամ սիրագորով, թեւերդ բա՛ց...

ԻՄ ԼՈՒՍԵ ՄՐՄՈՒՆՋ

Իմ լուսե մրմունջ, սեր իմ հրաբորբ,
Դու իմ կողքին ես, ինձնից անբաժան,
Քո լռությունը քուրա է այրող,
Քո ներկան՝ դեպի տուն կանչող կածան:
Աղոթք է դեմքիդ լույսը ճառագուն,
Ժամերգություն է հանդիպումը մեր,
Կանչում ես դու ինձ, կանչում դեպի տուն,
Ուր ինձ հյուսում ես սիրո երազներ:
Ինձ գրկող լույս ես խավարում վառվող,
Մի չքնաղ աստղ, որը չի մարում,
Ու ինձ կանչում է այդ լույսը իր մոտ,
Եվ ես ճամփորդն եմ հավերժիդ ծիրում:
Գրկիր ինձ, սեր իմ, ինձ քո գիրկը առ,
Տու՜ր երջանկության կայծը դրախտիդ,
Ամպատարած է երկինքը լազուր,
Ո՞ւր ես դու չկաս, ու՞ր ես իմ անգի՜ն,
Ցուրտ է, ձմեռ է, ձյուն է ամենուր,
Քո ջերմությունն է ուզում իմ հոգին...
Ծաղիկները հեզ խոր քուն են մտել,
Տերեւներն անխոս ընկան, թափվեցին,
Իմ տխուր սիրտը տաք տեղ չի գտել,
Քո ջերմությունն է ուզում իմ հոգին...

ԻՄ ԿՈՐԱԾ ԱՍՏՂԸ

Ինչ - որ մի քամի՝ անհո՛ւյս մոլորվա՛ծ,
իմ պատուհանի փեղկերն է թակում:
Ինչ- որ մի անձրեւ իմ լուսամուտին
խուսափո՛ւկ, անձեւ լաց է նկարում...
Լացի արահետն ինձ վեր է տանում՝
դեպի հրաշքի իմ մոլորակը...
Իմ երազների հրթիռները սեգ
թռչում են վերեւ՝ այդ մոլորակը գտնելու համար...
Այն մոլորակը,
Ուր երջանկության աստղս է փայլում,
Իսկ կարոտնե՜րս...
Իսկ կարոտներս աշնան ա՜յս ցրտին, պատուհանիս տակ,
Անհագ կարոտով դեռ սպասում են իմ երազների հրթիռներին սեգ,
որ պիտի գնան՝ այդ մոլորակը գտնելու համար:
Գտնելո՛ւ համար իմ երջանկության այն կորած աստղը ,
Այն միա՛կ աստղը, որ մոլորվել է Ծիրկաթիններին մշուշների մեջ...

ԻՆՉՊԵՍ ՁՅԱՆ ՓԱԹԻԼԸ

Կուզեմ դառնալ փաթիլ ձյունի՝
Օրորվելով մե՜ղմ ու դանդաղ,
Պաղ երկնքից իջնեմ ես վար,
Որ քեզ փարվեմ կարոտաբար:
Ու ինձ նայես պատուհանից,
Ձեռքդ մեկնես դու բաց փեղկից...
Քո ափի մեջ հանդա՛րտ իջնեմ,
Մե՛ղմ նազանքով ափդ շոյեմ...
Ձդիմանամ ջերմությանդ՝
Քո ափի մեջ հալվեմ, մնամ,
Եվ քո այրող ջերմությունից
Հենց ափիդ մեջ գոլորշանամ :
Ու չերեւամ , ինձ չտեսնես,
Անէանամ ու վերանամ,
Աչքերիդ մեջ ես հուշ դառնամ,
Մտքերիդ մեջ ՝ անմեռ մնամ:
Դու նկարես փաթիլն այդ ձյան
Կտավի մեջ քո մոգական,
Այն փաթիլը , որ ես էի,
Ձյան կերպարով ՝ հալվո՛ղ, անձայն...

ՏԽՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Այսօր շա՛տ տխուր եմ...

Տխրությունը կարծես եկել ու նստել է սրտիս մի անկյունում՝ նրա այգու մեջ...

Ես վատ եմ, բայց չեմ փորձում վռնդել նրան: Ընդունում եմ՝ ինչպես արեւն է ընդունում ամպին, որովհետեւ գիտեմ՝ նա եկել է ոչ թե ավերելու սրտիս այգին, այլ հիշեցնելու, որ աճը երբեմն միայն ցավի միջով է լինում:

Այսօր հասկացա, որ տխրությունն ունի աչքեր, որոնք տեսնում են անտեսանելին, ունի ականջներ, որոնք լսում են լռության ձայնը, եւ ունի խոհեր, որոնք պահում է լռության խորքում...

Նա՝ իմ տխրությունը, մերկացնում է հոգուս այգու ծառերը, թափում նրանց հին տերեւները եւ որպես առ որպես իր լռությամբ լցնում արմատների խորքը:

Ես երեւի չէի հասկանա լույսի համը, եթե չզգայի մթության դառնությունը:

Չէի գնահատի խոսքը, եթե տխրությունը ինձ չստիպեր լռել:

Տխրությունը սրտիս խորքում մի ամբողջ բանաստեղծությունների շարան է հյուսում, որոնք պիտի ծնվեն ու ապրեն հավերժության մեջ...

Երբ նրանք ծնունդ առնեն, ոչ մի աշուն չի կարող թառամեցնել նրանց, եւ ոչ մի ձմեռ՝ ձյունով ծածկել:

Մի օր ինձ կլքի տխրությունը, եւ երբ հեռանա, հոգիս նորից կպայծառանա, բայց ներսում մի փոքր դատարկություն կմնա... ինչպես այն սենյակում, որտեղ երկար ժամանակ հյուր ես պահել հարազատ մեկին, ու նրա գնալուց հետո օդում դեռ մնում է լռության հոտը...

Հիմա ես գիտեմ՝ տխրությունը թշնամի չէ:

Նա խորհրդավոր ուսուցիչ է, որ սովորեցնում է ինձ, թե ապրել նշանակում է համարձակություն ունենալ ներս ընդունելու եւ՛ արեւը, եւ՛ անձրեւի ամեն մի կաթիլը:

Տխրությո՜ւն, շնորհակալ եմ քեզ...

Դու սովորեցրիր ինձ գնահատել երջանկության գինը:

Մարիետա Սարգսյան

ՏՈՒ՜Ր ԻՆՁ ՔՈ ՍԻՐՈ ՀՈՒՐԸ ՄՇՏԱՎԱՌ

Տու՜ր ինձ քո սիրո հուրը մշտավառ,
Ես քոնն եմ հավերժ, գերին արբունքիդ...

ԹԵ ԵՍ ՉԼԻՆԵՄ

Թե ես չլինեմ,
Փնտրի՛ր դու ինձ քո թղթերի մեջ,
Քո մտքերի մեջ դու ինձ փնտրիր,
Երկնքում կապույտ եւ աստղերի մեջ,
Ամպերի գրկում եւ արեւի մեջ՝ արեւի անշեջ...
Թե ես չլինեմ,
Դու ինձ որոնի՜ր քո հուշերի մեջ,
Ծաղկի թերթերի, վարդի փշերի,
Ձյան փաթիլների եւ երկնից թափվող
Վարար անձրեւի կաթիլների մեջ...
Ծիածանի մեջ ժպիտս փնտրիր,
Ձյան հալոցքի մեջ արցունքս գտիր ,
Վարդի թերթերում շուրթերս փնտրիր,
Եվ սրտիդ խորքում իմ սերը գտիր:
Եվ հիշի՜ր հավերժ.
Թե ես չլինեմ, ինձ չմոռանա՜ս,
Կողքիդ կլինեմ հոգով ու մտքով,
Ես միշտ կաղոթեմ, որ դու վեհ մնաս,
Ապրես աշխարհում ջերմ ու տաք սրտով...
Թե ես չլինեմ...
Բայց թե քեզ համար, որպես քաղցր հուշ,
Ես միշտ կլինեմ...

ԼՌԵԼ Է ՀՈԳԻՍ

Այսօր տխուր եմ, լռել է հոգիս,
Նման է դարձել ավեր մի հյուղի:
Իմ սրտի աչքից արցունք է գալիս՝
Եղյամի նման այն ծառի ճյուղի:
Մեկն ինձ կորցրել է, կորցրել է հավետ,
Գնացել հեռու՛, գնացել անդարձ:
Մեկն ինձ մոռացել, հեռացել անհետ,
Ու չե՜մ էլ ուզում նրա վերադարձ:
Ես հայտնվել եմ հեղեղների մեջ,
Ջուրն ինձ տանում է պոկված ծառի պես:
Այդ հարահոսին չկա կարծես վերջ,
Ու ես խեղդվո՛ւմ եմ մարդկանցից անտես...
Այսօր տխուր եմ, լռել է հոգիս...

ՈՐՈՆՈՒՄ

Որոնեցի իմ ողջ կյանքում,
Որոնեցի քանի՜ տարի
Մի առկայծուն հույս իմ սրտում՝
Կանչելով քեզ ՝ արի՜-արի՜,
Ու մտքովս ինչպե՞ս չանցավ,
Որ փնտրածս բնավ չկա,
Սպասելով օրս անցավ,
Չգտնելով ապրեցի ցավ.
Ո՞նց չիմացա, որ երազ էր՝
Իրականում երբեք չկաս,
Որ երազ էր դա ինձ նման՝
Խենթ ու խելառ մի աղջկա...
Տարվել եմ ես կյանքի հուրքով
Ու չեմ զգում իմ տարիքը,
Ապրում եմ ես երազ կյանքով՝
Չտեսնելով իմ գալիքը...
Չեմ էլ տեսնում ես վախճանը ՝
Իմ հուրհրան ոսկեդարի,
Կամ՝ թառամող ալ վարդերը
Անցած կյանքիս ճանապարհի...
Ու... ես՝ գիժս, նոր հասկացա,
Որ նման եմ խենթ աղջկա,
Որ երազն է իր հորինում՝
Իմանալով, որ նա չկա...

ՔՈ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՒԶՈՒՄ ԻՄ ՀՈԳԻՆ

Աշունը անցավ, եկավ ցուրտ ձմեռ,
Եվ մերկ դաշտերը ձյունով պատեցին,
Ձյուն է միշտ մաղում, արեւ չկա դեռ,
Քո ջերմությունն է ուզում իմ հոգին...

16.qxd 13/08/2026 16:29 Page 8

ԿԱԽԱԿՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կախակն գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 7 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 344 միլիոն 938 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 77 միլիոն 398 հազար դրամ ընդհանուր արժեքով, 2-ը՝ պետական՝ 1 միլիարդ 227 միլիոն 540 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Կախակնում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 3300 մետր խմելու, 1500 մետր ոռոգման ներքին ու արտաքին ջրատար ցանցեր, 2000 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել ներհամայնքային նշանակության 327 գծամետր ճանապարհ, ընթացքի մեջ է արդի չափորոշիչներին համապատասխան 144 տեղանոց կրթահամալիրի կառուցումը:

Կախակնի կրթահամալիրը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, պետբյուջեի միջոցներով, 1 միլիարդ 251 միլիոն 258 հազար դրամ պայմանագրային արժեքով: Կրթահամալիրի կազմում կլինի նաեւ 80 տեղանոց մանկապարտեզի շենքը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբեր ամսից եւ կավարտվեն 2026 թվականի սեպտեմբերին: Շինարարական աշխատանքները 2026 թվականի հուլիսի կեսի դրությամբ իրականացվել են շուրջ 95 տոկոսով:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՇԱԽՄԱՏԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում հանդիսավորությամբ նշվել է Շախմատի մջազգային օրը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառումը կազմակերպել է ՀՀ Շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ Մարգարիտ Պետրոսյանը:

Միջոցառման շրջանակում անցկացվել է շախմատի մրցաշար, որի ընթացքում մասնակիցները ցուցադրել են իրենց տրամաբանական մտածողությունը, մրցակցային ոգին եւ խաղային բարձր մշակույթը:

Մասնակիցներին ողջունել է Վարդենիս համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Բարսեղյանը, ով կարեւորել է շախմատի դերը երիտասարդ սերնդի մտավոր զարգացման գործում եւ մարզիկներին մաղթել արդար մրցակցություն, հետաքրքիր պարտիաներ ու արժանի հաղթանակներ:

-Շախմատը ոչ միայն սպորտաձեւ է, այլեւ կրթական եւ դաստիարակչական կարեւոր միջոց, որը զարգացնում է վերլուծական մտածողությունը, համբերատարությունը, կենտրոնացվածությունն ու ռազմավարական մտածողությունը: Վարդենիս համայնքում նման նախաձեռնությունները միտված են՝ խրախուսելու երիտասարդների հետաքրքրվածությունը շախմատի նկատմամբ, խթանելու մտավոր սպորտի զարգացումն ու առողջ մրցակցային միջավայրի ձեւավորումը: Թեեւ մրցանակային տեղեր սահմանված չէին, ու շախմատիստները խաղում էին միայն իրենց ունակությունները ցուցադրելու համար, սակայն այդ օրը հաղթեց շախմատին նվիրվելու, հինավուրց ու մարդկային մտածողությունը կատարելագործող խաղին տիրապետելու գաղափարը,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում կայացել է բռնցքամարտի «Սեւանա լիճ -2026» 10-րդ բաց առաջնությունը, որը Մարտունու մարզադպրոցի հետ համատեղ կազմակերպել էր Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիան:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեւորգ Սարգսյանը, Մարտունու մարզադպրոցը մեկ հարկի տակ էր հավաքել 2008-2018 թվականներին ծնված 210 ուժեղագույն մարզիկների Մարտունուց, Երեւանի ,Դինամո մՀԿ-ից, Եղեգնաձորից, Ալավերդիից, Քաջարանից, Կապանից, Արտաշատից, Հրազդանից, Վայքից, Փարաքարից, Սեւանից եւ այլ համայնքներից:

Թիմային արդյունքներով առաջին տեղը գրավել է Մարտունու մարզադպրոցը, երկրորդ տեղը՝ Եղեգնաձոր համայնքը, երրորդ տեղը՝ Երեւանի ,Դինամո մարզական հասարակական կազմակերպությունը:

Մրցաշարն անցել է լարված ու հետաքրքիր պայքարում: Հաղթող մարզիկները եւ մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգեւատրվել են գավաթներով, մեդալներով ու պատվոգրերով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի զինղեկի պաշտոնի թափուր տեղի համար:

Զինղեկի պաշտոնի համար նախատեսված վարձատվությունը որոշվում է՝ ըստ դրույքի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Դիմում (ձեւ 1),

1 լուսանկար՝ 3x4 չափսի,

Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

Անձը հավաստող փաստաթուղթ,

Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները, (դրանց առկայության դեպքում),

Մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստազորի սպայի կոչում եւ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. օգոստոսի 10-ից մինչեւ օգոստոսի 21-ը ներառյալ, ամեն օր ժամը 10 00-ից մինչը 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. օգոստոսի 26-ին ժամը 14:00-ին Մարտունու պետական բժշկական քոլեջում:

Հասցե. ք. Մարտունի, Նարեկացի 2/1, հեռախոս՝ (0262) 41330, 077525301:

ԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՆԱՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում արդեն երկրորդ տարին է, ինչ համայնքապետարանի նախաձեռնությամբ անցկացվում է Նարդու համայնքային բաց առաջնություն:

Նարդու առաջնությանը մասնակցել են նախօրոք հայտագրված տարբեր տարիքային խմբերի 35 մասնակիցներ՝ Գավառ քաղաքից եւ համայնքի գյուղական բնակավայրերից:

Մրցաշարն անցկացվել է շրջանաձեւ եղանակով, Երվանդ Ղուրշուդյանի մրցավարությամբ:

Առաջնությունում հաղթող է ճանաչվել Արցախից բռնի տեղահանված եւ Գավառ քաղաքում բնակություն հաստատած Սեյրան Աղաջանյանը: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրել են Գավառ քաղաքի բնակիչներ Հենրիկ Բոշյանն ու Գարեգին Մեսրոպյանը:

Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից արժանացել են դրամական պարգեւների:

Մրցանակները հաղթողներին հանձնել է առաջնության կազմակերպիչ, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի սպորտի եւ երիտասարդության հարցերի պատասխանատու Նարեկ Մուրադյանը:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ ՓՈՂՈՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ Կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Մ. Հերացի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, ծրագրի շրջանակներում 600 գծամետր երկարությամբ հիմնանորոգվում է ճանապարհի երթեւեկելի մասը, տեղադրվում ջրահեռացման համակարգ, կառուցվում միակողմանի սալիկապատ մայթ:

Մխիթար Հերացի փողոցի մայթի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 60 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Սալիկապատ մայթի մակերեսը կազմում է 1200 քառակուսի մետր:

Մխիթար Հերացի փողոցի երթեւեկելի մասի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 50 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Այժմ կատարվում են հողային աշխատանքներ, կառուցվում է ջրահեռացման համակարգ:

Ծրագրի իրականացման արդյունքում առաջին անգամ Մխիթար Հերացի փողոցի բնակիչները բարեկարգ, ասֆալտապատ ճանապարհից ու սալիկապատ մայթից օգտվելու հնարավորություն կունենան:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 30. 07. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: